



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ ԱՆԹԻԼԻԱՍԵՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 13 Մարտին Լոս Անճելըս վերադարձաւ Լիբանանէն, ուր Կիրակի, 9 Մարտին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուտն ի Վիրապ տօնին առիթով ուխտի օրուան Ս. Պատարագը մատուցանելու հրաւիրուած էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հրաւերով:

Վերադարձէն ետք, Առաջնորդ Սրբազանը իր ուղեւորութեան մասին հարցազրոյց մը շնորհեց Ազգ. Առաջնորդարանի «Եկեղեցին Հայկական» պատկերասփիւռի յայտագիրին: Կարելի է զայն ունկնդրել Կիրակի, 16 Մարտի առաւօտեան ժամը 9ին, «Հորիզոն» կայանէն:

PRELATE RETURNS FROM ANTELIAS

On Thursday, March 13th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, returned from Lebanon where, upon the invitation of H.E. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, he celebrated Divine Liturgy on Sunday, March 9th on the occasion of the Feast of St. Gregory the Illuminator's Descent into the Pit which is the Pilgrimage Day of the Cathedral in Antelias.

Upon his return, the Prelate taped an interview about his trip which will air on the Prelacy weekly religious television program on Sunday, March 16th, at 9:00 a.m. on Horizon Armenian Television.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ ԾԱՂԿԱՉԱՐԴԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ

Կիրակի, 16 Մարտ, տօնն է Յիսուսի Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքին, որ Ծաղկազարդի տօնն է:

Ծաղկազարդի տօնին առիթով, մեր բոլոր եկեղեցիներուն մէջ Սուրբ Պատարագ պիտի մատուցուի եւ օրուան խորհուրդը ներկայացնող քարոզ պիտի փոխանցուի մեր հաւատացեալներուն:

Կիրակնօրեայի աշակերտներն ու մանուկները թափօր պիտի կազմեն, իսկ Ս. Պատարագի աւարտին պիտի կատարուի դռնբացեքի արարողութիւն:

Այս առիթով, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Ս. Պատարագ պիտի մատուցէ Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ ու պիտի փոխանցէ իր պատգամը:

Գերշ. Ս. Սուրեն Արք. Գաթարոյեան, որ հիւրաբար մեր Թեմը կը գտնուի, Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Գերշ. Ս. Եփրեմ Արք. Թապագեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

Գերպ. Ս. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան՝ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի մէջ:

Յոգշ. Ս. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան՝ Կլենտելլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

PRELATE TO CELEBRATE PALM SUNDAY AT HOLY MARTYRS CHURCH IN ENCINO

On Sunday, March 16th, all Prelacy Churches will celebrate the triumphant entry of Jesus into Jerusalem, Palm Sunday, with Divine Liturgy and the traditional Children's Procession. At the conclusion of Liturgy the Opening of the Portals service will be conducted.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino.

H.E. Archbishop Souren Kataroyan will celebrate Divine Liturgy at St. Gregory Church in San Francisco, while H.E. Archbishop Yeprem Tabakian will conduct services at St. Sarkis Church in Pasadena.

Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian will be at Holy Cross Cathedral in Montebello and St. Mary's Church in Glendale respectively.

ԱՄԱԳ ՇԱՔԹՈՒԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ս. Յարութեան տօնը կանխող Աւագ Շաբթուան ընթացքին, Առաջնորդ Սրբազանը այցելութիւններ պիտի տայ մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն եւ պիտի ըլլայ մեր հաւատացեալ ժողովուրդին հետ:

Առաջնորդ Սրբազանին Աւագ շաբթուան ժամանակացոյցը հետեւեալն է.-

Երեքշաբթի, 18 Մարտ, Աւագ Երեքշաբթին տասը կուսանաց յիշատակի օրն է: Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի հանդիսապետէ Յովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ արարողութեան, եւ պիտի տայ յաւուր պատշաճի քարոզ մը:

Յինգշաբթի, 20 Մարտ, Աւագ Յինգշաբթին իր մէջ կ'ընդգրկէ գանազան խորհուրդներ՝ Վերջին Ընթրիք, Ս. Յաղորդութեան հաստատման խորհուրդ, ոտնլուայ, ձերբակալութիւն եւ խաւարման գիշեր: Առաջնորդ

Սրբազան Հայրը Կլենտելլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի կատարէ ոտնլուայի կարգը, իսկ Էնսիւնոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ պիտի հանդիսապետէ Խաւարման կարգի արարողութեան:

Ուրբաթ, 21 Մարտ, Աւագ Ուրբաթ, յիշատակ խաչելութեան եւ թաղման: Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Օրէնճ Բաունթիի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ թաղման արարողութեան:

Շաբաթ, 22 Մարտ, Աւագ Շաբաթ, ճրագալոյց Ս. Յարութեան: Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ:

Կիրակի, 23 Մարտը, Սուրբ Յարութեան Տօնն է, Սուրբ Չատիկ: Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագ պիտի մատուցէ Կլենտելլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւ Ս. Չատկուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ:

PRELATE'S HOLY WEEK SCHEDULE

Monday, March 17th, is the start of Holy Week during which the Prelate will conduct services in various Prelacy Churches. Below is the Prelate's Holy Week schedule.

- Holy Tuesday-Remembrance of the Ten Virgins: St. Garabed Church, Hollywood
- Maundy Thursday - Washing of the Feet: St. Mary's Church, Glendale
Vigil: Holy Martyrs Church, Encino
- Good Friday - Crucifixion and Burial: Forty Martyrs Church, Orange County
- Easter Eve-Lighting of Candles (*Jrakalooyts*): Holy Cross Cathedral, Montebello
- Easter: St. Mary's Church, Glendale

ՊԵՅՐՈՒԹ ԿԵՅՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ «ԱԶԴԱԿ»Ի ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՊէյրուԹ իր կեցութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազանը Երկուշաբթի, 10 Մարտին այցելեց «Ազդակ» օրաթերթի խմբագրատունը եւ տեսակցութիւն ունեցաւ տնօրէնին՝ Տիար Շահան Գանտահարեանի հետ:

Առաջնորդ Սրբազանը Սրբազանը բարձր գնահատեց «Ազդակ»ի տարած աշխատանքները եւ վկայեց, թէ կայքէջը շատ մեծ ընդունելութիւն գտած է Արեւմտեան Ամերիկայի շրջանին մէջ: Ան գոհունակութիւն յայտնեց, որ միջ-գաղութային լրատուութիւններուն մէջ մնայուն եւ հետեւողական ձեւով տեղ ունին Արեւմտեան Ամերիկայի թեմի եւ ընդհանրապէս շրջանի հայ կեանքին առնչուած գործունէութիւններու անդրադարձները:

«Ազդակ»ի տնօրենը, գեկուցել է ետք տարուող աշխատանքներուն մասին, յատուկ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին՝ Ազգային Առաջնորդարանին կողմէ «Ազդակ»ի ֆոնտին կատարուած քաջալերական նուիրատուութեան համար:

Առաջնորդ Սրբազանը նաեւ հարցազրոյց մը ունեցաւ խմբագրութեան հետ, Սփիւռքի հիմնական գաղութներէն կազմող քալիֆորնիահայութեան եւ շրջանին մէջ թեմին կողմէ իրականացուող տարբեր բնոյթի աշխատանքներուն մասին:

PRELATE VISITS AZTAG DAILY IN LEBANON

On Monday, March 10th, the Prelate visited the office of Aztag newspaper in Lebanon where he met with the editor Mr. Shahan Kandaharian.

The Prelate highly commended the efforts of the editorial staff and their website which has been well received and of great value to the communities in the Western United States. He also expressed appreciation that the newspaper regularly reports on activities of the Western Prelacy and our community.

Mr. Kandaharian conveyed to the Prelate details of their current endeavors and thanked him for the Prelacy's donation to the Aztag fund.

In an interview done for the paper, the Prelate spoke of the various projects and activities of the Prelacy in its mission to provide for the needs of Armenian living in California and nearby communities.

ԿԼԵՆՏԵՅԼԻ ԲԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔԻ ՆԱԽԱՃԱՇ

Հինգշաբթի, 13 Մարտի առաւօտեան, Կլենտէյլի քաղաքապետարանի նախաձեռնութեամբ, եւ 45րդ տարին ըլլալով, տեղի ունեցաւ քաղաքապետի աղօթքի նախաճաշը Կլենտէյլ «Հիլթըն» պանդոկին մէջ: Արժ. Տ. Վազգէն Քինյ. Աթմաճեան յանուն Առաջնորդ Սրբազան հօր ներկայ եղաւ նախաճաշին:

45TH ANNUAL GLENDALE MAYOR'S PRAYER BREAKFAST

On the morning of Thursday, March 13th, the 45th annual Glendale Mayor's Prayer Breakfast took place at the Hilton Hotel in Glendale.

Rev. Fr. Vazken Atmajian represented the Prelate at the breakfast.

ՇՈՒՇԻ «ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 5ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Ուրբաթ, 14 Մարտի երեկոյեան, Շուշիի «Դանիել Ղազարեան» երաժշտական դպրոցի 5-րդ տարեկան ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Միշըն Զիլզի «Արարատ Տան» Տօքսփէնթան սրահին մէջ:

Ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ Արժ. Տ. Վիգէն Ա. Քհնյ. Վասիլեան, որ յանուն Առաջնորդ Սրբազան Զօր պիտի փոխանցէ օրհնութեան եւ գնահատանքի խօսքը:

5TH ANNUAL BANQUET OF SHUSHI MUSIC SCHOOL

On the evening of Friday, March 14th, the 5th annual dinner banquet of the Daniel Ghazaryan Music School of Shushi will take place at the Deukmejjan Hall of Ararat Home in Mission Hills.

Rev. Fr. Vicken Vassilian will attend on behalf of the Prelate and convey his blessings.

«ՋԱՅՐԵՆԻՔ» ՄԻՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Շաբաթ, 15 Մարտի երեկոյեան ժամը 8-ին, պիտի տօնակատարուի «Ջայրենիք» Միութեան 15-րդ տարեդարձը, Նորթ Զոլիվուտի «Օճախ» ճաշարանին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան եւ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Փեղիվանեան ներկայ պիտի ըլլան ձեռնարկին:

15TH ANNIVERSARY OF HAIRENIK ASSOCIATION

On the evening of Saturday, March 15th, the 15th anniversary of the Hairenik Association will be celebrated at Ojakh Restaurant in North Hollywood.

Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Fr. Nareg Pehlivanian will represent the Prelate at the event.